09/6237

Հանրօգուտ ծրագիր

Վայք համայնքի Փոռ բնակավայրի դպրոցի նախկին շենքը համայնքին հանձնելու վերաբերյալ

1. Փոռ բնակավայրի մասին

2016թ. գյուղը միացել է Վայք խոշորացված համայնքին: ՈՒնի 126 բնակիչ, որոնք զբաղվում են հիմնականում՝ անասնապահությամբ, մեղվաբուծությամբ և հողագործությամբ:

Վարչական ներկայացուցչի աշխատակազմը (վարչական ներկայացուցիչ, օպերատոր, գրադարանավար) և գրադարանը 1996թ. տեղակայված է խարխուլ վագոն տնակում, որում հնարավոր չէ աշխատանքները նորմալ կազմակերպել հատկապես ամռան շոգին և ձմռանը վագոն տնակի անմխիթար վիճակի և ջեռուցման հետ կապված: Գրադարանը ունի 2570 միավոր գրականություն և ներկայումս չի գործում, իսկ գրքերի խնամքը վտանգի տակ է, ելնելով պահպանման պայմաններից:

2. Դպրոցի շենքի մասին

(հատակագիծը կցվում է) Կառուցվել է 2001թ. ԱՄՆ-ից բարերար Ալեք Բաղդասարյանի և իր տիկնոջ միջոցներով: 2012 թվից չի գործում աշակերտների թվի նվազման պատճառով, հաճախում էին 4 երեխաներ, որոնք հիմա սովորում են հարևան Ազատեկ գյուղի դպրոցում: Չշահագործվելուց շենքում առկա են քայքայման նշաններ:

3. Հանրօգուտ ծրագիր

3.1. նախատեսվում է վարչական ներկայացուցչությունը և գրադարանը տեղափոխել դպրոցի շենք՝ այդ նպատակի համար օգտագործելով 3 սենյակ (կցված հատակագծում N 2, 5, 6 սենյակները), երկուսը վարչական ներկայացուցչի, օպերատորի և գրադարանի, երրորդը որպես ժողովների և ընդհանուր հարցերի քննարկման համար: Այդ նպատակի համար 2018թ. ներդրվելու է 300 հազար դրամ, 2019թ. 400 հազար դրամ եվրոպահարաններ և դռներ տեղադրելու համար, որով կլուծվի շենքի ջերմամեկուսացման և էներգախնայողության հարցերը:

3.2 Առաջարկում ենք 3-րդ և 4-րդ սենյակները օգտագործել որպես երեխաների ցերեկային խնամքի կենտրոն (նախակրթարան): Գյուղում առկա են 1-6 տարեկան շուրջ 10 երեխաներ, որոնք անվճար կօգտվեն այդ հնարավորությունից, իսկ երիտասարդ մայրերը հնարավորություն կունենան ավելի շատ ժամանակ տրամադրելու գյուղատնտեսական աշխատանքներին: Այդ նպատակի համար 2018թ. նախատեսվում է ներդնել 400 հազար դրամ՝ նախակրթարանին առանձին մուտք բացելու և այն կահավորելու համար:

3.3 2019-20 թթ.նախատեսում ենք դպրոցի հետևի մասում գտնվող

կանաչապատ հարթ տարածքում կառուցել մանկական խաղահրապարակ, որը կօժանդակի նաև երեխաների ցերեկային խնամքի կենտրոնի աշխատանքներին: Ներդրումը կազմելու է 1 մլն. դրամ՝ գույքի ձեռք բերման և շինարարական աշխատանքների համար:

4. Ծրագրից ակնկալվող արդյունքները

Բնակավայրի վարչական ներկայացուցչությունը կաշխատի ամենօրյա բնականոն ռեժիմով: Կգործի գյուղի գրադարանը, որից կօգտվեն շուրջ 100 մարդ: Անվճար կգործի նախակրթարանը, որից կօգտվեն 10 երեխաներ և նրանց մայրերը: Բնակավայրը կունենա մանկական խաղահրապարակ և զբոսայգի, որը կլինի նաև երիտասարդության ժամանցի վայր՝ շուրջ 40 շահառուներով: Բնակավայրը կունենա հարցերի քննարկման և ժողովների անցկացման վայր, շահառուների թիվը 100 հոգի:

Հանրօգուտ ծրագրի իրականացման ժամկետը 3 տարի է: 3 տարի հետո ծրագիրը գործելու է անժամկետ: Ընդհանուր ներդրումների չափը կկազմի 2 100 000 դրամ